

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՒՍԱՐԱՆ

ՀԱՆԴԻՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆ Ի ՎԵՐԱՑ ՎԻՐԳԻԼԻՈՍԻ՝

ԵՆԷԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԳԻՐԳՆ

Ա. Ասային չորս տողերն. որոնք են. — Կարքեդոն, հռովմեական փառաշրանք. — Հոմերոսի և վիրգիլիոսի աստուածներն. — Երկու Եսայքն. — Երկու փորորիկներն. Զնւարտորին և Զարտարտրին. — Սրտատու հառաչանք Ողիսեսի և Ենեասայ:

Առաջին չորս տողերն ըստ ամենայնի վիրգիլիոսի չեն համարուիր .

« Որ նրբեմնի եղեգամբ դաշնակելով երբեմն երգ .

Եւ հրաժարեալ յանտառաց, յորդորէի շուրջ զարտորէս
Ի հրութիւն՝ թէպէտ անյազ՝ շինականին, վաստակելով

Նրկրագործաց հաշոյ երկ. զարիսականս այժմիկ զահեղ

Ընչէ՞ն և զարի երգի... »:

Կ'երևի թէ մեծ մասն ի հնոց որք Ենեաս կանկի վրայ առիթ ունեցան խօսելու, 'ի սկիզբն այս բառերս կը կարգեն Ըզգեմ և գայրն երգեմ... Նաև կ'ըսուի թէ լաւագոյն ձեռագիրք այսօրինակ կը սկսին: Բանադատք ոմանք առաջին չորս տողերս անարժան համարեցան վիրգիլիոսի հանճարոյն: Յայնցանէ իսկ, որք զայն վիրգիլիոսի կ'ընծայեն, կան ոմանք որ կ'ըսեն, հին աւանդութեան մը համեմատ, թէ վարիոս՝ բանա-

ստեղծին բարեկամն և առաջին հրատարակողն, լաւ ըրած ըլլայ ի բաց բառնայով այս չորս տողերը: Ի բաց որոշողաց պատճառներուն մէջ, կ'ըսէ Հայն, հզորագոյնն այն է, թէ հսկառակք եմ քննաքնան և օրինաց իսկ դիւցազներդ քանաւատեղծութեան, ոչ միայն այնմ՝ յատուկ եղող մեծվայելութեան, այլ և բանաստեղծին ուժգին եռանդեանն և վառվառն երևակայութեանն. ուրով հանճարն, նախնապէս նիւթոյն մեծութեամբ գրաւեալ, և ոչ մի եղանակաւ պէտք է արտուղի ելնէ կամ ընթերցողին միտքն ուրիշ կողմ դարձնէ: Այսու հանդերձ պէտք է խոստովանիմ թէ, յետին պատճառաբանութիւնս ևս ինծի դարձեալ անգոր կ'երևի, և եթէ տողերն արժանաւոր ըլլային վիրգիլիոսի տաղանդին (զոր ոչ ինծի և ոչ այլ ումք յարդեաց կը վայլէ գատել) չեմ գիտեր թէ ինչու բանաստեղծն պիտի չսկսէր այս անգամ ըստ ամե-

նայնի իր համեստութեան համեմատ ,
և իրաւացի ակնարկ մը տալով իր աս-
պարիզին յաջորդական ընթացից և
աստիճանաց :

« Որ նըրբենի եղեգամբ գաշնակելով երբեմն
երգ :

Եւ հրաժարեալ յանտառաց , յորդորէի շուրջ
զարտորէս :

Ի հըւթիւն՝ թէպէտ անյագ՝ շինականին , վաս-
տակելով

Երկրագործաց հաճոյ երկ . զարիսականս սյոժ-
միկ զահեղ

Ըզգէնս և զայն երգեմ , որ նախ ի արովական
սահմանաց

Յիտալեա ճակատագրեալ գայր , և յափուըս
լաւինեայ . . . » :

Եթէ միտքս դրած ըլլայի այս խըն-
դրոյս վրայ լեզուաբանական տեսու-
թեամբ խօսիլ , հարկ պիտի ըլլար զկայ
առնուլ յառաջին քայլափոխիս և եր-
կայնել զճառս . պիտի ցուցնէի թէ ա-
մենահմուտ անձանց և յայսմ դատաս-
տան ընել կրցողաց կարծիքն միաձայն
չէ , չորս տողերուս ազնուաբանութեան ,
պատշաճութեան , և նոյն իսկ լատինա-
բանութեան նկատմամբ : Ըսի թէ Հայն
կը մերժէ զայնս . Հայնսիոս , Մարքընտ ,
Պուրման հաւասարապէս կը մերժեն .
բայց վակնէր՝ այն քաջուշիմ անձն՝ որ
կատարելագործեց Հայնի գործը և ա-
ւելի վայելչացուց , Վիրգիլիոսի կ'ըն-
ծայէ : Ապա յետ վակնէրի ահա Պ.
Բիրլզէմի , հնարագէտ Լէյտայի տպա-
գրողն և անաչառ զտողն և անխնայ
մաքրողն օրինակագիր (classiques)
գրութեանց , որ դարձեալ կը մերժէ
զայնս և կը ջնջէ հակառակ բազմաթիւ
ճշմարտապատու՝ հաւաստեաց : Ու-
րեմն Պավիոսի են թէ Վիրգիլիոսի այս
տողերս , որ թերևս կերպ մը վարժու-
թեամբ , մեզի հաճոյական կ'երևին .
արդեօք ապուշ գրագիրս մ'են՝ թէ
բուն բանաստեղծի մը . — Պէտք է բռնմ
թէ բարի օրինակ չէ , առաջին ալ-
նարկ տալնուս ժամանակ հին յիշա-
տակարանի մը , տեսնելն թէ մեծ հե-
ղինակութիւն ունեցող քննիչք և վար-
ժապետք միմեանց յայտնադէս անհա-

մաձայն են : Բարէ , Բիրլզէմի և վակ-
նէր երկու նըրբաղնին տեղեակքն և արա-
մաագոյն Վիրգիլիոսի թարգմանքն , կ'ը-
սեն մին այո՛ և միւսն ո՛չ : Այս բանս
անտեղեակներու կամ թերուսից միայն
կրնայ խորհրդածութեան նիւթ ըլլալ ,
և զիրենք կրնայ տարակուսանաց մէջ
ձգել , եթէ ըստ արդի ժամանակիս դա-
տելու ըլլան զհինս : Իսկ ես , խորհրդ-
ածութիւն մը կ'ընեմ , այսինքն՝ թէ
վտանգաւոր է ուզելն որոշաբար վճիռ
տալ այնպիսի խնդրոց վրայ՝ որոց կեն-
սական և նըրամիտ տարերքն շատ ժա-
մանակէ 'ի վեր գոցեա ցրուած և ան-
հետացած են , և թէ շատ ապահով և
թերևս աւելի օգտակարագոյն է (գիտ-
նոց թողով մաքրել պարզել այս փոռտ
խորշերը) , ընթեռնուլ և ուսանիլ զհինս
աւելի ընդարձակ և ազատ կերպով , և
այն կողմանէ որ աւելի կը մօտենայ մեր
տեսութեան կարողութեան և մեր ճա-
նաչման կերպին : — Կը շարունակեմ :

« Բազումս ընդ ծով և ընդ ցամաք յածեալ վե-
հիցն սաստիւ ,

Եւ ի Հերայ աննւրի ի չարայուըն ցամանէ ,
Նա և յողունս ի մարտի վէշալըս կըրեաց , մինչև
կառոյց

Քաղաք , և ած ի Լատիոն ըզգիս , ուստի ազգն
Լատին

Եւ նախահարբ կացին ալբեանք , և բարձրամուր
Հռովմայ պարիսպք :

« Ինձ Մուսա դու՛ լեր պատճառացն թեւա-
դիր , վասն զի 'ի գից

Յասուլցէլոյ՝ յայնքան արկածոս գըժընդակ տա-
ռապանօք

Դերազանցեալն այր ի կրօն՝ վարեալ զընայր , և
գըշխոյն դից

Հիմ դառնացեալ . ից՛ իսկ հեռ այնքան ի սիրտ
երկնաւորաց :

« Էր կարբեդոն քաղաք նախնի , և դաղթական
անդ աիւրացի

Բնակիչ հանդէպ Խառիլոյ՝ հեռի ի դրանցն Տի-
բերի ,

Ճոխ և գոռ ի պատերազմ . հաճոյ Հերայ զայն
աւանդէն

Լեալ առաւել քան ըզՄամոս և քան զԷրիկը առ-
հասարակ ,

Անդառոր նըմա կառք և անդ եղեն զէնք և զը-
րաճք .

Եւ անդրստին , եթէ հրամանք ճակատագրին նե-
րէին ,

Խորհրդէր և գուն գործէր իշխան տունէլ ազգաց
 • զայն գիցուհին :
 Իսկայ էր լուեալ զի ի տրովեան սերեալ զաւակ
 արեւնէ :

Զամուրս ուրեմն քսեկեց էր տիւրականս . և
 ապա աղջ :

Ծագաց էրկրէ իշեկցող և խրոխտ ի մարտ՝ հան-
 դերմէր գալ :

Ի կործանումն Լիբիոյ . այսպէս Պարկաց կա-
 մեցեալ զայս :

Իսկ Հերա , որուն օրտին մէջ չիջած
 չեն այն ցասման և ոխակալութեան
 պատճառներն , որք զինքն այնչափ
 սաստկութեամբ Տրոյիոյ դէմ գրգռե-
 ցին , և Պարիսի յայտնի անարգելն իւր
 զեղեցկութիւնը , և մինչև Գանիմեդեայ
 հնացած յափշտակութիւնը (ի զարմէ
 Տրոսի) , Հերա բոլոր այս հին և նոր թըշ-
 նամութեանց պատճառներու համար ,
 չի դադրիր ի վրէժինգրութենէ , և շատ
 տարիներ կը մուրցընէ և կը թափառե-
 ցընէ ամեն ծովերու մէջ , որչափ կա-
 րելի է զիրենք ի Լատիոնէ հեռացը-
 նելով .

« Այսքան էր ծանր ըզհոովմական հաստէլ
 գործ » :

Այս սկսուածէն իսկ կը տեսնուի
 թէ որչափ նշանաւոր է այս գիւցաղներ-
 գութեան աղջալին գրոյմը . անոր հա-
 մար ամեն տեղ և նկարագրութեանց
 իւրաքանչիւր նշանաւոր կէտերուն՝ հը-
 ռովմէական գուշակութիւն մը մէջ կը
 բերէ : Վիրգիլիոսի նպատակն այս է .
 ըստ կարելոյն Հոմերոսի նմանիլ , ան-
 տի աւար առնուլ ամենայն կերպ բաղ-
 դատութեանց , նկարագրութեանց և
 դարձուածոց . որչափ կարելի է շատ
 կողոպուտ գողնալ , որպէս զի զկապի-
 տողին ճսխացընէ . վասն զի վիրգի-
 լիոսի քերթուածոյն վախճանն յայն կը
 նայի , իբրև իրեն կէտն և չլրագործն :
 Եւ ինչպէս միջին դարու ժամանակ կը-
 սուի թէ յարգի ձեռագիրներն չլրա-
 յով կապուած էին յորմունս վանաց
 կամ մայր եկեղեցւոյն՝ առ որ կը վերա-
 բերէին , այսպէս Ենէականին քեր-
 թուածն կրնանք երևակայել որպէս թէ
 մշտնջենաւորապէս պրկեալ և հաստա-

տեալ ոսկի չլթայով մը և ամբացու-
 ցեալ ի կճեայն կապիտողինի : Հոյա-
 կապ չէնքն ամբողջացընող մասերէն
 մէկն է :

Իր կարքեղուն քաղաք նախին . . .
 Ի՛նչ աւելի հաճոյական բան կրնար ըլ-
 լալ Հոովմայեցեոց քան զբառս էր . ըս-
 կըսիլ իր պատմութիւնն յուշ առնելով
 թէ այս խրոխտապանծ ախոյանը որ ա-
 տեն մը կար , հիմա ալ չկայ , և զգաց-
 մամբ մը՝ զոր ունէր Վիրգիլ , թէ ի միջի
 և յանուն անմահ քաղաքին՝ Հոովմայ ,
 կը խօսի :

Հերա յայսմ տեղով իբրև աստուա-
 ծուհի կարգեղոնի նկարագրուած է , և
 յետ սակաւուց նախնի Լատիոնի աս-
 տուածուհին պիտի ըլլայ , ուր թագա-
 ւորեց իր հայրն Սատուռնոս : Այն ամե-
 նայն որ կրնայ արգելք ըլլալ Տրոյացւոց
 և տրոյական բարդաւաճութեան՝ իրեն
 հաճոյ է : Վիրգիլիոս մեծ ուշ ունի իր աս-
 տուածները շարժման մէջ դնել , ցուցը-
 նելով նաև անոնց պատճառը . և չկա-
 րենալով ըստ ամենայնի ինչպէս որ
 պէտք է պատճառ մը ցուցընել , իմաս-
 տասիրական մեկնութիւն մը կու տայ :
 Կը հաւաքէ և կը յիշէ համառօտիւ
 յայսմ տեղով Հերայի բովանդակ տըր-
 տունը . և չկարենալով խորամուխ ըլ-
 լալ յայնս՝ կը գտէ . իցէ՛ իսկ Ռեռ այն
 քան ի սիրտ երկնաշորաց : Շուտով
 առիթ պիտի ունենանք տեսնելու Հո-
 մերոսի բանաստեղծութեան մէջ թէ որ-
 չափ աստուածներն աւելի բնական են
 կամ զոնէ կ'երևին , վասն զի բանա-
 ստեղծն չի հեռանար անոնցմէ և ա-
 նոնց գործերէն և ոչ մէկ վայրկեան մը ,
 իբրև քննադատելու զայնս : Եոյն իսկ
 Վիրգիլիոսի արուեստին և մտադրու-
 թեան մէջ կ'երևի ջանք մը , իր աստուա-
 ծոց բնագործ մը տալու : — Հերա՛ բա-
 նաստեղծութեան ամեն որոշիչ կէտե-
 րուն կը ներկայանայ , աւելի երկնցընե-
 լու և շատ ժամանակ տեսել տալու հա-
 մար : Նա ինքն է հանդիսին մեծ գործ
 կատարողն . և չափէն աւելի զգալի
 է այս :

Հերա տեսնելով զՏրոյացիս որ կ'ա-

ռագաստաւորին և կը մեկնին 'ի Սի-
կիլիոյ, դէպ յիտալիա ուղղելով ըն-
թացքնին, անդէն և անդ կը մտածէ
թէ պէտք է արգելք ըլլալ այսմ, ապա
թէ ոչ իր երջանկութիւնն և իշխանու-
թիւնն իբրև դիցուհի՝ պիտի տուծի :
Նշանաւոր առանձնախօսութեամբ մը
կը յայտնէ իր միտքը .

« Ընդէր իցէ ի սկըսեալ գործոյս լինել ինձ ձե-
ռնութեմ ,

Ձընկերելէ յետոս ի բաց զարքայն տեկրեանց յՈւ-
տալիոյ ,

Եւ հրամանաց ճակատագրին եր տալ տեղի յաղ-
թահարեալ :

Ըննաւատորմն Արգիացւոց կարաց հըրկէզ առ-
նել Պալատ ,

Եւ խորատոյզ զգնոսա յալիս ծովու ընկուզանել ,
Վասնք մեղաց յիլեանըն միայնոյ մոլեգնելոյն
Էտալոյ , և զբարկացոյտ յամպոց շանթիս Արա-
մազդայ

Արկեալ ջըրուեաց նա ըզկայմս , ալէկոծեալ
հոգմով զգծով ,

Եւ զբոցաշունչն ընդ խոց կողին մըրըրկոծ
հար ի սուր ժայռ .

Իսկ ես որ քիչ նազմի գըշիոյ , քոյր և տիկին Ա-
րամազդայ ,

Այս քանի սմբ են ընդ միում ևէթ աղին սպ-
տերազմիմ :

Ո՛ հրամանացն այսուհետև Հերայ երկիր երբեք
պագչէ .

Ո՛ աղերաւոր զոհ ի բազին իւր մատուցէ ։

Հերայի առանձնախօսութիւնն նըշ-
մարել և յիշեցընել կու տայ ուղղակի Ու-
դիսականին երկու հատուածքն , որոց
մէջ Պոսիդոն նման բաներ կ'ըսէ , բայց
աւելի բնականութեամբ կը խօսի , ու-
րուն Վիրգիլիոս շատ ուշադրութիւն
դնել պարտք չէ համարած : Պոսիդոն՝
Ոդիսևսի մեծ թշնամին է , որ զիւր
միականի որդին զՊոլիփեմոս կուրցը-
նելով , չարաչար կը տառապեցնէ իր
բազմախոռով տարերաց վրայ : Բայց
յերկնից բնականութենէ հեռացած է , և
յայտնի ևս բացակայք կը մեղադրուին ,
և Ոդիսևս կը չահի միւս աստուածնե-
րուն ընդհանուր գիծութեան զգաց-
մունքը : Պոսիդոն դառնալով յեթով-
պիոյ , ուր զնացած էր հարիւրեզանց
մասն ընդունելու , կը տեսնէ զՈդիսևս

իր շինած նաւին կամ լստտին վրայ ,
հեռացած 'ի Կալիպսեայ կղզիէն և մօտ
յալող ճանապարհորդութեան մը կա-
տարածին .

« Դիտեաց բացուսա , սրտմտեցաւ տեսեալ
զՈդիս ծովայած .

Շարժեաց ըզգլուին , ասէր ընդ միտս . « Բաբէ
ուրեմն նոր պատգամ

Ետուն անմահք վասն Ոդիսեայ , լեալ իմ ի
ծագն եթովպեան .

Դա Փէսակեանց մօտ կայ յերկիրն , ուր միշտք նո-
րա սահմանին .

Սակայն անուշտ դա շարատանջ կոչուծեսցի
տակաւին » :

(Ոդիս . երգ . Ե) :

Եւ երկրորդ անգամ մը երբ Ոդիսևս
'ի նին՝ քնոյն փեակեանց ձեռքով յի-
թակէ կը հասնի և 'ի ցամաք կը հա-
նուի .

« Բայց Պոսիդոն խեթ զՈդիսեայն , զոր սպառ-
նացաւ մեծասաստ ,

Ոչ մոռացաւ . մատեաւ մեղմով հետաքըններ
զԱրամազդ .

« Արամազդ հայր , ինձ լիք այլ ևս չուք յանմտ-
հիցն ի դասէն ,

Երբ մահացուքն անշուք թողուն Փեկեանք սե-
րեալքն յիմ ճեռէ .

Ես ասէի , բազմաշարժար ի տուն դառնալ Ոդիսի ,
Ընդ դարձն երբեք ոչ խանդացեալ , զոր խոստա-

ցար ակնարկի .

Իսկ արդ Ոդիս ի քուն անոյշ նաւեալ եհաս յի-
թակա ,

Պըզինձ ոսկի աւեալ ամբաւ և անկուածոյս բե-
հեղեայ .

Անուշտ այնչապ նա ոչ տանէր Տրոյեանց քան-
դեալ յոստանէն ,

Եթէ դառնայր ինքն ողբանգամ առեալ զիւր
մասն յաւարէն » :

Արամազդ այսպէս կը պատասխանէ

« Բաբէ , կրկնեաց Ամպրոպային , զինչ երկրա-
շարժք ասացեր .

Շուք տան քեզ դիւ . Ծանր է գձնել զաւագդ
հուծկուդ անվահէր .

Իսկ Թէ մարդ որ յաւակնելով քեզ չուք շածէ
արժանի ,

Դիւ քոյ բաղկաւդ առցես ըզբեթ , արձ , հւստը՝
լոպ կոթ » :

(Ոդիս . երգ . ԺԳ) :

Այն վայրկենին Պոսիդոն նոր վրէժ-
խնդրութիւն մը կը մոտժէ :

Հոմերոսի Արամազդն այս առթիւս
մէջ, աւելի քաղցրաբարոյ և սակաւ-
տրաւաւաքսն է քան զԱրամազդն վիր-
գիլիոսի, որ դժուարութիւններ պիտի
ընէ Հերայ կատաղութեանց դէմ: Հո-
մերոսի մէջ, բնաւ յանդիմանութիւն
մը չըներ Պոսիդոնի ռիսակալութեանց
համար, և ոչ իսկ Արեգական՝ երբ նա
բարկացած, (վասն զի Ողիսևսի ընկեր-
ներն Սիկիլիոյ մէջ իր եղները սպաններ
էին), կը սպառնայ՝ որ եթէ վրէժխըն-
դրութիւն չըլլուի, պիտի խորասուզի
Պլուտոնի թագաւորութեան մէջ, և այ-
նուհետև մեռելոց միայն իր լոյսը ծա-
գէ: Արամազդ մէկ խօսքով մը զիրէր կը
հանգարտեցնէ, և կը բռնադատէ զնա
որ շարունակէ իր լոյսը ծագել Անմա-
հից և նոյնպէս մարդկանց, և կը խոս-
տանայ որոտալ և կ'որոտայ իսկոյն:

Հոմերոս կը ներկայացընէ իր աս-
տուածները ինչպէս իրեն ժամանակը
կ'ըմբռնէին, երբեմն մարդասէրք, եր-
բեմն դաժանք, զայրացիութեւ, շահա-
սէրք. մարդկային սաստկագոյն կրիւք
լցուած են, այլ հանդերձ գերբնական
կարողութեամբ: Ինքն Հոմերոս այս հա-
կասութեանց վրայ զոր ծաղրածու մը
կրնայ գտնել, կարծես թէ չի զարմա-
նար: Վիրգիլիոս, ինչպէս աւանդութիւ-
նը կը վկայէր, այնպէս ընդունելով իր
աստուածները, չհաւատացողի կերպ
մը բռնած է, այնպիսոյ մը որ կիկերո-
նի և Էսսարոս կը յաջորդէ: . . .

Հոմերոս իրեններուն վրայ այս ու-
շադրութիւնը ունեցած չէ, վասն զի կը
հաւատար անոնց, կամ իր չորս կողմ
եզդոներն կը հաւատային: . . .

Հոմերոս ինչպէս ըսի, իր ժամանա-
կին գաղափարներն ունի աստուածոց
վրայ, և այնց կ'ընծայուէին իրօրի ի-
մաստութիւն, նախատեսութիւն, և
կարողութիւն. միանգամայն մարդ-
կանց կիւրքն և սովորոյթներն, հան-
գէտներն, երգերն, սիրելութիւնը.
բնակութիւն և ոսկեշող ծիրանի, և
այսց ամենայնի ճաշակն: Իր աստուա-

ծոց զբաղած ժամանակնիս բարձր մարդ-
կութեան մէջ ենք, և բարձր դասիկո-
նի մը մէջ. բայց այսչափ միայն:

Ըստ այսմ կ'ըսէ Աթենաս առ Ոգի-
սևս.

« Անշուշտ, ասէր, յոյժ հնարեմաց իցէ ոք ոյր
խաբուսիկ,

Այր որ է գաւա քեզ յաղթեսցէ, Թէպէտ ինք-
նին իցեն դէք.

Այլ շատ է արդ. է հայթայթանս մեք երկո-
քեանս եմք ներհոն

Դու վէճ չըթմաք և խորհրդով մահկանացուաց
է դասուն,

Ես է յանմահս եմ անըման հնարից է գամս, է
հանճար »:

(Ոգիս. երգ. ԺԳ):

Սակայն այս պարզութեանց և բոյո-
րովին մարդկային յատկութեանց հետ,
որ միայն օգուտ ունին գէթ զաստուած-
ները ծայրագոյն կերպով բնական բա-
րեբարոյ երևցընելու, մեծապաւնչ և
զարմանալի կերպարանք իսկ և իսկ
յանդիման կ'եղեն և կը յորդեն, կեր-
պարանք որոց ոչինչ չի հաւասարիր, և
որք ապա իբրև վսեմի օրինակք է գործ
կ'ածուին: Իյիականի առաջին գրոց
մէջ, երբ Թետիս աղերս կը մատուցա-
նէ Արամազդայ՝ վրէժ խնդրել յԱքիլ-
լիայ և հարուածել զՅոյները, ստրկա-
նոց մը կ'ընէ զայն և վախնալով իր ան-
ձին համար. վասն զի վախ ունի, մի
գուցէ բարկանայ Հերա այս բանիս հա-
մար և միւս աստուածներուն փոյն ի-
րեն թշնամանք ընէ. իսկոյն յետ այս-
պիսի տարածայնութեան գաղափարին,
կ'անցնի այն ահաւոր անվրիպելի նշա-
նին, որ կը վաւերացընէ իր խոստումը,
ակնարկելով

« կապոյտ յօնիւբըն Զըրուանեանն.

Յանմահ գըլնոյ թագաւորին աստուածեղէն շար-
ժեցան վարսքն,

Եւ ըզմեծըն տառանեալ գըղբրդէցոյց զՈլիմ-
պոս »:

Փառաւոր և պարզ մեծութիւն, զոր
փիղիսա միշտ աչաց առջին ունէր, երբ
կը ձևակերտէր կայծակներու իշխեցո-

ղը. — Իսկ Աթենաս, պատերազմաց Աթենասն՝

« Վաշ առեալ Թափառնակէ էջ յԱթմպէս Ե դադարեաց,

Եւ հասեալ փութապէս յԱքայիցւոցն երազ քաշտի »...:

Եւ Պոսիդոն՝ « հաղիւ թէ երեք քայլ կ'առնու, չորրորդին ասպարիզին ծայրն կը հասնի »: Բոլոր այս նմանութիւններս անբաժան են այն դաղափարէն զոր ունինք Հոմերոսի հանճարոյն վրայ, ինչպէս որ ինքը մեզի կը նկարագրէ իր աստուածները: Յաւելցուցէք ամեն դիպուածներուն մէջ, բարոյական մեծամեծ մտածութիւնքն որ անոնց բերանը կը դնէ, թէպէտ շատ անգամ խանգարեալ և հակասութեամբ լի են կրից պատճառաւ: Այս է իր բովանդակութեան մէջ Հոմերոսի և իր ժամանակին նախնի գիցաբանութիւնն:

Վիրգիլիոս կրցածին չափ կը ջնայ անհետ ընել այս անպատեհութիւնքը. իր նմանութեանց և հետևողութեանց մէջն իսկ իր Արամազդայ կշիռը աւելի հաւասարաթափ է, և ակնյայտին հակասութեանց ցնցումն առաւել նուազ քան թէ Հոմերոսինը: Վիրգիլիոս իր Արամազդը իբրև գերագոյն իմաստուն մէկը կ'ուզէ երեցընել. ներողամտութեամբ կը ծիծաղի կրից վրայ՝ որոց ազանատես է, երբեմն նաև անտարբերութեամբ մը մէջ կը մտնէ խաղաղեցընելու համար, պէտքին համեմատ վսեմամիտ խօսքեր գտնելով Բազդին հրամանացն հակառակ. վերջապէս այն պահուն յորում աստուածներն կամ աստուածուհիք սաստիկ քինախնկրութեամբ միմեանց դէմ կը վառին, յորդոր կու տայ աշնուական կերպով խօսիլ, և կ'ուզէ տպաւորել ի նոսա հոռմսական կնիքն՝ որ է ծանրաբարոյութիւնն:

Այս Հոմերոսի և Վիրգիլիոսի աստուածոց համեմատութեան մէջ, մտցընելով նաև ղրթսին, որ թէպէտ ուրիշ որ և իցէ մասամբ չի հաւասարիր Վիրգիլիոսի՝ այլ գերազանց է միայն Գոթոգիա թատերգութեամբն, երբա-

յական և քրիստոնէական հաւատոյ բարձրութեան պատճառաւ, այս երբեակ տեսութիւնն համառօտելով, կարելի եղած է ըսել:

« Վիրգիլիոս կը պայտպանէ իր աստուածները. Բթսին կը յափշտակուի առ Աստուած:

« Հոմեր՝ իր բարեմիտ անպատշաճութեամբն, ուր որ կրնայ կը հաւասարեցընէ (մարդկութեան) աստուածային մեծութիւնը ըստ այնմ որ մարդկային հանճարն ինքն իր կարողութեամբ կը վերանայ հզօր թռիչով, թէպէտ ինկնալու վախով »:

Արդ Հերա (վասն զի յայսմ խօսքիս թելը կտրեցի), որպէս զի վրէժխընդրութիւնը կատարէ՝ կ'երթայ գտնելու զԵւոլ, փոթորիկներու աստուածը ու պահապանն, որ յԵւոլիս կը թագաւորէ:

Հոմերոսի մէջն ալ կայ Եւոլ մը, որուն ճշգրիտ օրինակն Վիրգիլիոսի մէջ կը գտնենք: Երկուքին զանազանութիւնը նշանակելու ժամանակ, պիտի ըմբռնենք իր բովանդակ ճշգրութեան մէջ Վիրգիլիոսի արուեստին գաղտնիքը:

Վասն զի հիմակուընէ իսկ կրնայ ըսուիլ, ինչ որ պիտի հաւաստենք իւրաքանչիւր հատուածին համար, որչափ գրքիս ընթերցումը յառաջ երթայ, Եւնակասի առաջին գրքէն՝ աւելի կը հասկըցուի Վիրգիլեայ Հոմերոսի նմանելու բերմունքը: Շատ բնական բան էր այս. բանաստեղծն սկսելու ժամանակ Հոմերոսով լցուած էր, և գոգցես ստիպուած էր ի գործ դնելու և լաւ կերպով մը կարգելու իր յիշողութեան գանձերը: Այսպէս նաև երրորդ հովուերգութեանը մէջ, առաջին ըստ ժամանակագրական կարգին, ստիպուած էր ցուցընէ զինքը քաղելու Թէոկրիտեայ գեղեցկութիւնքը և միայաբելու իր յատուկ ըմբռնմանց հետ:

Վիրգիլիոսի Եւոլն ամեն ժամանակ կը յիշուի: Նկարագրութիւնն զոր կ'ընէ բանաստեղծն՝ մեծ է, աղնուական, հաստատուն, ճիշդ և վեհափառ: Եւոլ փոթորիկներու երկիրներուն վրայ

կը թագաւորէ . հովերու թագաւորն է , զորս ամփոփած կը պահէ , որք կը մտնէ չեն բարկութեամբ մեծափոր այրի մը մէջ . 'ի գլուխ բարձր ժայռի մը կեցած իշխանական դաւադարն 'ի ձեռին' կը մեղմէ , կը զիջուցանէ և կը սանձէ իր ստահակ հպատակաց կատաղութիւնը և անհամբերութիւնը , զոր եթէ 'ի միտին 'ի շղթայից արձրկէ , բաւական են դարձեալ աւերելու զերկիրն և զերկիր , և առաջին խոհրոհական վիճակին դարձնելու : Արամազդ , նախատեսութեամբ կարգաւորած է զայնս , զբոլոր հովերը ժողովելով՝ բանտարկած է անձաններու մէջ , լերանց մեծամեծ զանգուածոց ներքեւ , և իրենց վրայ թագաւոր մը դրած է :

Այս թագաւորիս , այս ստորակալ , գեալ աստուծոյն կը դիմէ Հերա , և երկու բառով կ'իմացնէ իր փափազն .

« Քեզ , Եւրէ , ետ անմահիցն Հայր արքայն մա-
հացուաց
Իշխանութիւն ընկճել զալիս և ամբառնալ մերբը-
կակոծ .

Աղբ ինձ ոտիս ընդ տերեւեան նաւէ ընդ ծով ,
յիտալիս

Ձեկոն և զգթերափըս իւր պարտեալս բերե-
լով ,

Տուր զօրութիւն հովմոց , ընկն ըզստատափայտըս
խորասոյզ ,

Կամ զայլս այլուր ընդ ալիս արկ , և ջրբուեա
ըզգիակունս :

Նն եօթներեակք ինձ երկեակ յաւերժհարանց
չքնաղաղեղք ,

Ձեւս ի նոսա գեղանին տաց քեզ ի հարսն ըզ-
Դիոպէ ,

Անըծ զօգիւ կապեալ ընդ քեզ՝ գոլ կենակից
քեզ յամայր յամայր » ... :

Մինչև այս վերջին նուէրս , որ նմա-
նութիւն է այնմ զոր Հերա կ'ընէ Քնոյ
(երգ . ԺԴ . Իլիական) առ 'ի հրապու-
րել և հաւանեցընել որ քնացընէ զԱ-
րամազդ , աւելի զգաստութիւն մը կ'ե-
րկի , և եթէ ներքի է ըսել , Հռովմէա-
կան բնադրոյմը . միով բանիւ՝ յաւէտ
հրաման մ'է այս զոր կու տայ գերա-
զոյն տիրով տիկինն , հրաման մը՝ որոյ
փոխարէնն պատշաճական հատուցում
մ'է , և ոչ հրապուրանք :

Իլիականի մէջ Հերա այսպէս կը թե-
լադրէ .

« Այլարի , և ես ըզմիս քեզ ի Շնորհաց մանկա-
գունից

Տաց ածել ի հարսնութիւն և յամուսին քեզ ա-
նուանել ,

ԶՊատիթէն , զորմէ կըղկաթ ես կաթոգի զոր ա-
մենայն » :

Իսկ Հերա Ենէականի մէջ այսպէս
կ'ընէ առ Եւր .

« Նն եօթներեակք ինձ երկեակ յաւերժհար-
սանց չքնաղաղեղք ,

Ձեւս ի նոսա գեղանին տաց քեզ ի հարսն ըզ-
Դիոպէ ,

Անըծ զօգիւ կապեալ ընդ քեզ՝ գոլ կենակից
քեզ յամայր յամայր ,

Նն որդակը ըզքեզ հայր կացուցանել գեղաւո-
րաց » :

Յայտնի է տարբերութիւնն . իւրա-
քանչիւր բառն զիտուած է ակնոյց զօ-
ղիւ , գոյ կենակից :

Եւր Համառօտ պատասխան մը կ'ուղ-
ղէ առ Հերա .

... « Քեզ՝ ով գըշոյ՝ որ ինչ կամիսդ անկ է գի-
տել ,

Ինձ ըզպատուէրս առ 'ի քէն տըւեալ պարտ է
կատարել ,

Քւն , որպիսի և իցէ , իշխանութիւնս ինձ այս աը-
ւաւ .

Քւն գատաղանս ի Դիոյ , և շաշակից գիցըն բազ-
մել ,

Իշխել մըրբկաց և ամպրոպաց » ... :

Կ'ընէ , և նիզակին ծայրոյն կը զար-
նէ լերան կողը և պատառուածքէն հո-
վերն խուռնընթաց կը խուժեն . Ենէա-
սայ տորմիդն իսկոյն փոթորկին ձեռքը
կը մատնուի :

Հոմերոսի Եւրոն՝ Ողիսականի մէջ ,
բոլորովին տարբեր նկարագիր ունի :
Ողիսակ իր դժբախտութիւնները փեա-
կեանց գլխաւորներուն կը պատմէ Ալ-
կինոյոսի սեղանին վրայ . պատմելէն
վերջը թէ ինչպէս կրցաւ փախչիլ մեծ
դժուարութեամբ 'ի Կալիպսոսայ կղզիէն

և 'ի ձեռաց Պոլիփեմեայ, յետ կորսնցը-
նելու ընկերներէն շատերը .

« Յելոլայ հասաք կղզին, ուր անմահից սիրելին
Բնակէր Եւոլ իպպոտասեան ծովապարփակն ի
կըզգին:

Կուռ պղզընծայ պատուար, և ժայռն ողորկ պա-
տէր զայն ողջոյն:

Եւ ծնան նրմա վեցեակի դստերք և վեց ուստերք
քաջաբուն:

Ետ ըզգըստերս որդւոց իւրոց. նոքա արդոյ ծը-
նողաց

Խրտանանակիցք ցանդ լինէին ի համագամ ի խոր
տակաց:

Ըզտիւն ողջն հնչէր բուրեան ողջ արքունիքն ի
դաւթի:

Ըզցայք ննջին պարկեշտ հարսամբք ի գորդա-
գարդ ի մահճի:

Սա ամիս մի հիւր քաղաքին զիս յարկ չքնաղ մե-
ծարեաց:

Հարցաքններ ինձ զիջնոն, ըզնաւս Եունաց և
ըզքարձ:

Ողջ պատմեցի. հաս օրն, և զիս ուղւոյ դընել
մաղթէի:

Եանձն առ սիրով. զիս արձակեաց, նաև հորդեաց
ինձ ուղի:

Պատուասիրեալ ետ ինձ և տիկ զմորթոյ զեղին
իննամայ:

Եւ ըզհոգմունս մերկաշունչս ելից կապեաց ի նը-
մա:

Ըզնա հոգմոց համարարպետ եդ Արամաղդ յաշ-
խարհի,

Զի սանձ կամ թափ տացէ նոցա իշխանաբար ըստ
կամի:

Տիկ զայն առեալ, ի լար արծաթ պըրկեաց եդ
խորս ի նաւուն:

Ըզդուշացաւ զի մի արտաքս սըպըրդեացի սիւսդ
մի խուն:

Զեփիւռ միայն թող մեզ արտաքս շնչել նաւաց
օժանդակ:

Սակայն ի դուր. զի մերոյին անմըտութեամբ մեք
կորեաք:

Նաւեալք ինն օր տիւ և գիշեր տեսաք զերկիր
հայրենին,

Ի ասաներորդն ըզկրակաժառս տեսաք դուրով
մերձ նըմին:

Անդ զիս քուն առ, զի խոնջ էի. ցանդ յիմ ձեռս
էր նաւուն զեակի,

Զեռու ումեք զի հայրենիս հասանիցեմք մեք
արագ

(Ողբ. Երգ. Ժ):

Այս բնական և աղետաւոր երազին
մէջ, վերջի վայրկենին և նաւահանգստի
դիմաց հասած, երբ Ողբիսկսի ընկեր-

ներն կ'ըսեն իրարու, դիտելով զար-
ծաթ թեւը, թէ Եւոլի տկուր շատ
դանձեր և շատ ընծայներ կը բերէին:

« Բաբէ, բնաւից արդոյ է այրս յոր և աշխարհ
չասանէ,

Նաև փարթամ նա շատ կապուտ ի Տրոյիս Նո-
իւր ածէ:

Իսկ ուղեկիցքս ունայնաձեռն ահա դառնամք
մեք ի տուն:

Նա և Եւոլ պատուասիրեալ շնորհեաց սըմա
տիկ թաղուն:

Եկէք սեցցուք զի՞նչ կայ ի տիկն, որչափ ոսկի
և արծաթ »:

Այս նախանձու և չարածճիկ հետա-
քրքրութեան խորհուրդը կը յաղթէ,
կը քակեն տիկն բերանը, և բոլոր հո-
վերն կը ցնդին. սոսկայի փոթորիկ մը
կ'ելլէ և զիրենք յիթակէէ հեռի կը
տանի:

« . . . « Ես ըսեմափեալ ի քընոյն,
Խորհիմ, արդեօք հոսեալ նաւէն մահ խընդրեցից
ի ծովուն,

Կամ թէ արդեօք լուռ ժուժեցից և ապրեցոյց
տակաւին:

Համբերեցի և քօյ առեալ կայի այնպէս ի նա-
ւին:

Լան զի անդէն նաւք մըրկեալք յԵւոլիս վարե-
ցան:

Անդ առ ծովափն առեալք ըզըւր, առ նաւս ի
շաջ բազմեցան:

Կերին արբին. ես քարոզիւն և ընկերաւ ի յուղի
Ձօբոյ յԵւոլ, դըտի ի շաջ ընդ ընտանեացն յաջ
կըմբի:

Մըտաք ի տուն. նստիմք առ սեամս. հիացեալ
նոքա հարցանեն:

« Դարձար, Ողբաւ. զի՞նչ քեզ աղետք հասին ի
լար ի Քաջէն:

Մեք զամենայն քեզ հոգացաք յըզէլ ի տուն հայ-
րենին,

Կամ թէ ուր քեզ հաճոյ իցէ »: Ըսայ, կրկնեմ
թախձ ադին:

« Մեզան ինձ արքս, մեղաւ և քունս, տուք,
բարեկամք, զօրափէք »:

Արու բանիւք կարծեմ գրգեւ. նոքա համբուն
կան լըռիկ:

Ձայն կարգաց հայրն, « Ե՛լ ի կղզւոյս, ել այր
չուաւ, այր նկուն:

Զէ ինձ մարդ զայրն առնուլ յըզէլ, ընդ որ ան-
մահ դիք ցաննուն:

Ել երթ ի քայ, զի Աստուծոյ աստ ղեկերիմ հա-
սեալ ես »:

Ասաց, վարեաց. ելի տանէն. յողոց հանեմ
դառնապէս:

Նաւեմբ Եսաթ Թախծեալ Հոգեւոյ . . .

(Ողբ. Երբ. Ժ.)

Այս սխալման և յանցանաց գաղա-
փարն միացընելն ձախողակ բաղդի մը
և գծիդակ թշուառութեան հետ, և այս
գաղափարս թէ յարատեւ տառապանքի
դատապարտուած անձը՝ արծանի է ձա-
խողակ բաղդի, առաջին աւելորդապաշ-
տութեանց բնական է և համեմատ: Չե-
րևիր որ զարմանայ Ողբսէս իբր տմար-
դութեան վրայ, և ոչ ոք կը պահէ իր հին
հիւրընկալութիւն գէմ: Երկու եւոյններուն
տարբերութիւնն որոշակի կը տեսնուի:
Հովբրուն գահակալելուն մէջն է իրենց
հաւասարութիւնն: Հովբրունին, երբ
ինք իրեն մնայ, ազնիւ անձն մ'է, ա-
ւելի խնամակալ՝ քան թէ թագաւոր,
ճշգրիտ տանտէր մը իր գերդաստանին
մէջ, որ իր սեպացեալ կողոյշն մէջ
պղնձի պարիսպներուն և երկաթի կո-
ղերուն ներքեւ զուարճանալ և փափ-
կանալ կը ջնայ, և ինչպէս կ'ըսուի
պարսպոյդ կեանք կ'անցնէ: Տիկն
որով կ'ուզէ բարեբարել Ողբսէսի
բաժնուելուն ժամանակ, կ'անող հնա-
րագիտութիւն մ'է, և յարմար Արիոս-
դոյի պէս մէկու մը նախանձն չարծե-
լու: Հովբրուն ելլելու կերպն տկին մե-
ջէն, նաւաստիներուն անխոհեմութեա-
նը պատճառաւ, այնպէս բնական հնա-
րած և ճարտարութեամբ ազուցած
է, որ կեղծիքին ճշմարտութեան ե-
րևոյթ կու տայ: Որչափ հեռի է այս
վիրգիլիոսի խիստ եւոյն, որ ստորա-
կարգեալ աստուած մ'է, տրոուս, ան-
հետաքրքիր, և որ ձանձրացած կեր-
պով մը իր ժայռին վրայ կեցած է:
Հոսովմէական խիստ կարգապահու-
թիւնն, վիրգիլեայ եւոյի ձակատին
վրայ անցեր է և յայնմ գոյմած է իր
խորդոմութիւնն: Այն գլխաւորաց մէկն
է, ինչպէս ըսուած է Պիւռոսի համար,
որ կը ծերանային քանի մը լեգէոններ,
յուզ աննշան պատռոյն մէջ, և գերա-
գոյն հրամանատարն զրեր է զինքը նը-
շանաւոր տեղւոյ մը վրայ բացարձակ

հրամայող, պատրաստ առ հնազանդիլ
և միանգամայն հնազանդութիւն ընդ-
ունելու: Սոպո և զինուորական ծան-
րութիւն մը կը տիրէ իր զործոց վրայ,
շարժումն որով կը հարուածէ գաւաղա-
նի կամ նիզակի հակառակ ծայրոյն լե-
րան կողը, հովբրուն անցք բանալու և
նշան տալու համար. կատարեալ հա-
կադրութիւն մ'է արծաթի թելին և
տկին որ կը քակուի Հովբրունի մէջ,
վիրգիլիոս, հարկին պահանջելուն հա-
մեմատ, իր զործոց գիւցաղնական ե-
րևոյթ մը կու տայ: Հոսովմէական ծան-
րաբարդութիւնն, կանխաւ ալ նշանա-
կեցի, յայտնի կ'երևի ի սկզբնաւորու-
թենէս. սիրող չէ՝ եթէ տեղն իսկ յար-
մար ըլլայ, յունական զուարճասու-
թեան և երևակայութեան:

վիրգիլիոս, իր ինքնակալին մէջ բոլո-
րովին ուրիշ նպատակ դրած է, և առ-
այն կը դիմէ ուժգին և համառօտաբա-
նութեամբ: Եւոյի այրէն ելած բոլոր հո-
վերն մէկմէկու հակառակ շնչելով ա-
լէկոծութիւն կը հանեն: Եւ հողմք գոռ-
մարտակեալ . . .

. Ասաց, ու ի տեգն իւր գալարուն
Եհար ըզող խողոցացեալ ժայռիցն, և հողմք
զուարճասկեալ
Հրոսն ընդ որ գլտանն էլս, և ընդ երկիր փո-
թորկն:

Եւնչն ընդ ծով և ի խորոց անդընդոց խուռն ի
միասին

Հիւսիս և հարաւ և արփրկեանն ամպրոպայոյդ՝
Բլէւնառն և ծովափունս անդրը զալսըն Թա-
ւալն:

Անդ ճիշ մարդկան, և ճոպանաց անդ Զարճա-
տիւն, յափշտակեն

Ձերկին և զոխ ամպք յաչաց. որոտան գունդք,
բազմի ի ծով

Թուխ գիշեր, հուր խիտ ընդ խիտ փայլատակէ
ընդ եթեր:

Եւ գառալեաւ Տնկրացւոց արկածքն ըզմահ
տան նըկատել:

« Ըզողանի մասունք մարմնոյն հարան Ենեայ,
և զերկոսին

Ձեռս ի յաստեղս ուղերձեալ՝ « Ո՛հ երանի, ա-
սէ, և բիւր

Երանի, որոց հոսա գեմ յանգիման հայրենեաց
Առ պարիսպս բարձրաբերձս Պերգամայ մե-
ռանել վազ,

Ընդէր և ինձ չեղև, հըզորդ ի Դսնայեանքս Տի-
գիտէ :

Անկանել ի քուսմէ աջորդ ի դաշտս Ելինի,
Ուր քաջն Հեկտոր նեռահար յիշկիդեայ, և
մեծն անկաւ :

Սարպեդոն, ուր Սիմոյիս ընդ կոհակզըն թա-
ւալէ :

Յափրոտակեալ զարի արանց ասպար ըզլէն և
սաղաւարտ :

Եւ զգիսկունքս կորովիս : Եւ ընդ ողբոցն մը-
ռնչեալ :

Ի հիւսիսոյ հար ըզկայմիցն թըռչարանս փոթո-
րիկ :

Ամբռնային մինչև յառտեղս ի վեր ալք, բեկ-
տին թիակք :

Առաջք ի բաց ասիւթիս, կողք ի բախիւն ա-
լեաց մատին :

Սեպանայ լեռուն ջրակուտակ, կէսք կան ի ծա-
ղըս կոհակաց :

Այլոց բանան ալք զերկիր, եռան յորձանք
խոտն ընդ աւազ :

Առեալ զերիս բալիէ հարաւ ի քարաժայռս
Թալթաբուրս :

Որ բագինք յիտալաց ժայռն այնոքիկ յորըրքին,
Ջանարգիկ ցըցուեալ քամակ ցըմըկանունս ա-
լեաց ի վեր :

Եւ զերեւն այլս ի խորոց վարեալ մըղէ Եւր ի
ծանծաղ :

Աղիողորմ ի տեսիլ, կոծէ ի խրուտս անդր և ի
հուն :

Ածէ զնոքք աւաղալոյտ և զմին ետես ինքն Ե-
նէաս :

Յառաջ կուտէ մինչև ի խելս յահագին ալեաց
հարեալ :

Ջայն որ բարձեալ Լիկիացիս և զմտերիմն ամէր
Որոնտ :

Նաւապետն ի կայիցն գըլթիլայր կործան ան-
կեալ :

Եւ զնաւն երիցսս սըտուտեալ զերեաւ յա-
լեաց յորձանք սաստիկք :

Ընկընուն և լայիսիւր ծովուն ի ծովափս նըլ-
մարին :

Սոտ անդ նուազունք ի լոյզ տախտակք և զէնք
արանց, գանձ տրովական » :

Ջարմանայի նկարադրութիւն մ'է և
միշտ յիշատակուած : Մեծ, անպաճոյճ
և բնական պատկեր մ'է, աւելորդ բան
մը չկայ, ամեն զէպք մէկմէկու կը յա-
ջորդեն, կը միանան, և կը յառաջեն,
այնպիսի կատարեալ և հաւասար ա-
րուեստով մը, որ ընթերցման ատեն ու-
րիշ բան մտածել չի տար, բայց եթէ
զարհուրելի իրականութիւնը, Եւ սա.

կայն յայսմ իսկ իւրաքանչիւր պարբե-
րութիւնք և բառերն Հոմերոսի յիշա-
տակութիւնքն են . . .

Հովերուն յանկարծակի շղթաներէն
արձակուիլն, իրենց իրար անցումն,
մոլեղին փոթորիկն, Ենէասայ վախն,
այն վայրկենին ըսած խօսքերն և իր
ցաւն չմեռնելուն համար Տրոյիոյ դաշ-
տերուն վրայ, այս ամենը հետևողու-
թիւն է Ուրիասկանի հինգերորդ գըր-
քին, և ինչ որ Ողիսևսի գլուխն եկաւ
յետ բաժնուելոյն ի կալիպսեայ կըղ-
զիէն : Բայց մեծ արուեստ և ճարտարու-
թիւն պէտք էր չըռնադրօսելու համար
իրին կերպարանքը, և այնքան ճշգիւ
դարձնելուն և յարմարցնելուն մէջ Ե-
նէասայ վրայ, որ շատ տարբեր հանգա-
մանաց մէջ կը գտնուէր :

Ողիսևս վերջապէս հրաման կ'ընդ-
ունի մեկնելու ի կալիպսեայ կղզիէն,
հակառակ սիրոյ գեղաշուք զիցուհւոյն,
ուր ցաւով և արտասուք կ'անցընէր օ-
րերն իւր իմականիւն տենչալով. կը մտնէ
ինքնակերտ նաւուն մէջ միայնիկ, և ա-
մենայն կերպ պաշարով և պատրաս-
տութեամբ լցուած, ամբողջ տասնը-
եօթն օր յաղողութեամբ կը նաւարկէ, և
տասն և ութերորդ օրն հասնի կը սկըսի
տեսնել փէակեանց երկրին լեռնագը-
լուխները, որ հեռուէն չրոց երեսին
վրայ իբր վահաններ կ'երևէին : Այն ժա-
մանակ Պոսիդոն յեթովպոյի դառնա-
լով, կը տեսնէ զնա. և կը խօսի բարկու-
թեամբ այն բաները՝ զոր սակաւ մի
յառաջ յիշեցինք, և իսկոյն փոթորիկ
մը կը յարուցանէ .

« Ասաց, և հար զերեքարձէնն, ամպ գումա-
րեաց, ծով խռովէր,

Ըզծով ցամաք ծածկեաց յամբուտս, իջոց յեր-
կնից ըզգէրէր :

Եւրոս, Նոտոս կից խուժեցին, զեփեւս շնեաց
ուժգնակի :

Յուրտ պարզ հիւսսին մոլեգնեցաւ ալիս ամբարձ
ամեհի :

Պակեաւ Ողիս և թուցեալ ծնգաքն յողոց ե-
հան քաջարին :

« Եղբակ եմ ես, տաքնայ է ինձ. իրաւ գու-
ժեաց Դիցուհին :

Նախաձայներ զիս ծովատանը մինչև հասեալ է տուն իմ:

Վահ, հիբացեալ զինչ լինիցիմ. արդ բանքն ողջոյն կատարին:

Դիտս գերկին պատեաց ամպովք, ըզծով խռռվեաց վէտ ի վէտ:

Մըրիկք շնէն այլազոյմունք. ո՞վ օրահաս դառնալէս:

Երեցս, քառիցս երջանիկք Յոյնք որք յիլինն ի մարտին

Տապաստ անկան առ Ատրիդեաւ. ո՞վ ինձ դէպ տայր զօրհասին,

Եաւուր յորում յիս Տըոյացիք շուրջ ըզմարմնունք Աքիլլէայ

Տէգ տեղային պղնձադէն, բազդն իմ լինէր գերակայ:

Զի դահճանս ես առնուի փառքք ի Յոյնս պանծալի:

Այլ արդ, աւանդ անփառունակ ինձ մահ մընայ ողբալի »:

(Ոգիւս. Երգ. Ե.)

Փոթորկին շարունակութիւնը ուրիշ տեղ մը Ոյիսականի ժի գրբին մէջ կը գտնուի. դարձեալ Ոգիսականի վրայ է դէպքն, բայց կենացը նախընթաց պարագայի մը մէջ, զոր յետոյ կը պատմէ, երբ կը հասնի փեակեանց քով: Իր ընկերներն, Սիկիլիոյ մէջ գտնուած Ժամանակ, հակառակ իր կամաց կ'ուտեն Արեգական եզներն, և հաղիւ թէ նաւ կը մոնեն՝ Արամազդ կը հարուածէ և կը պատժէ գիրենք փոթորիկ հանելով:

« Ելաք ի նաւն, մըտաք ի ծով, պարզեմք ի կայմն առաջաստ,

Մեկնեալք կղզոյն, չիք այլ երկիր, ծով երևեր և երկին:

Ըզնան ի մէգ պատեաց Դիտս, անդունդք ներքոյ մըլթագնին:

Նաւն քայլեաց վայր մի յառաջ, զեփիւռ շնչեաց յեղակած:

Մըրիկ հոլմոյն ահեղակերպ խռոթեաց կայմն կառանաց:

Ուժգնահիշակ խղեաց զկառանն, անկաւ թափ կայմն ի կործան:

Ի գոգ նաւուն թօթափեցան և ող կազմած նաւական:

Ղեկավարին ի խելո նաւուն ջախեր գըլուին ի կայմն:

Ողջ և ոսկերք փշին գլխոյն, ինքն գլեցաւ ի նաւէն,

Թմբեաց ի ծով իբրև լուղորդ, զոգին փչեաց եղկելն:

Զևս որոտեալ անդ խիտ առ խիտ շանթեաց հրացան ի նաւին:

Ստանեցաւ ողբ աստափայտն հարեալ շանթն աստուածէն:

Հոռ ծըծմբոյն դրաւեաց ողջոյն, արքն ի նաւէն հասեցան:

Նորը թօթափեալք իբրև ագաւաք յալեաց վերայ ծրփային:

Այլ հիբացեալք. Աստուած ինքնին զմանայր նոցա զօր դարձին »:

Այս հատուածիս մէջ կ'ուզեմ սակաւ մի զկայ առնուլ, Վիրգիլիոսի նշանաւոր նշանաւորն ի յոյդ խօսքերուն վերայ, և երկու նկարագրութիւնքն փոփոխակի զուգակշռելով, քանի մը դիտողութիւն ընել որ անաչառ քննադատութենէ յառաջ կու գան:

Նախ և յառաջ տարբերութիւն մը կը անանուի: Հոմերոսի մէջ, առաջուց կը ճանչնանք զՈգիսական. երբ մըրկէ կը բըռնուի, սիրտ կը շարժէ շատ թափառեալ ըլլալով և տեսած ըլլալովն զինքը լալագին ծովին եղբրը նստած, և հիւծիլ հայրենեաց հիւանդութեամբ պարագորդ զօսանաց մէջ, որովք կը շրջապատէր զինքը Նալիպսէ: Ինքն իր ձեռաց աշխատութեամբ կը շինէ զճարտարագործ լաստափայտը, որ ծովու ալեաց մէկ բախմամբ պիտի խորտակի: Ինքն միայն առանձին է այն լաստափայտին վրայ, վառ ըզձով և սըրտաթունդ յուսով լցուած, և եթէ կ'այլայլի, և տկարութիւն կու գայ իր վրան և երկիւղ կը պատէ իր մեծանձն սիրտը, այս ամենս բնական են, ամենը մարդկային բնութեան հետեանք, թէպէտ և ինքն դիւցազն մ'է: Եւ այս սրտառու հառաչանքը. Երիցս քառիցս երջանիկք... իրեն կցորդ պատճառ ունի: Ոգիսական կը ցաւի քաջի պէս չմեռնելուն համար, փառաց օրուան մէջ, այն օրն՝ յորում վեհանաճարար պատերազմեցաւ Ալաքսանդր հետ, Աքիլլէասի մարմինը Տըոյացուց դէմ պայտպանելու համար, և այդ տեղ թէպէտ վիրաւորեալ կը հալածէր զամեն մօտիկնալ համարձակողները: Սակայն քաջ մահուան փառք չունենալուն համար չէր միայն իր ցաւը այն թխահոծ նաւա-

կոծութեան ժամանակ, այլ թաղման յուղարկաւորութենէ զրկուելուն համար, որ յոյժ կարեւոր կը համարուէր ի հանգիստ և ի պատիւ մեռելոց, ըստ հնոց գաղափարին:

Վիրգիլիոս, կրնայ մակաբերուիլ, ջանք ունէր մոցընելու և յարմարցնելու իր գրութեան մէջ այս գեղեցիկ տողերը, որք խորամանկ գրողնուած էին իր մտաց մէջ: Բայց կ'երևի, երբ ուշ գրուի գրից հանգամանքին, թէ շատ շտապած է Վիրգիլիոս, որպէս թէ վախ ունեցած ըլլայ կորսնցընելու առիթն և յարմար տեղն: Համառոտութիւնն և ընտրութիւնն՝ երբեմն սուղ և հոծ, որ կը տիրէ իր բանաստեղծութեան ոճոյն մէջ, յառաջին քայլափոխիս կը տեսնուի: . . .

Այն հառաչանքը զոր ենէասայ բերանը կը դնէ, և իւր դիւցազին կը յարմարցընէ .

. « Ո՛հ, երանի, առէ, և բիւր
Ներանի. որոց և հաս գէմ յանգիման հայրենեաց
. վազ մեռանէ »

Այս պարագայիս մէջ դէմ յանդիման հայրենեաց անուանի զուրցուածքը գեղեցիկ կերպով կը կենդանացնէ. ոչ թէ փառաց կամ երկրակալութեան արչաւանքի մէջ, Ատրիդեանց ծառայելու համար, որ անտարակոյս արդար գործ է յաշս Ոգիսևի, բայց ոչ ազատ ի փառասիրութենէ և ի հպարտութենէ, այլ ենէաս՝ արդարապէս պաշտպանութիւն ընելով հայրենեաց հողոյն վրայ, և Հէկատրի նման իրենի ներուն համար պատերազմելով, և իրենց առջև, կը ցանկար մեռնիլ: Այս գգացումն ըստ բոլորին յարմար է գիւցազին ազնուասիրտ և արդար բնաւորութեան, ըստ նկարագրին: Հազիւ կ'իմանանք թէ ժամանակին սրբութեան համար կը մոռնայ բացատրելու իր ցաւոց զօրաւոր պատճառներէն մէկն. վասն զի միայն սիրոյ գորովանաց և պատուոյ ցաւը չէ զինքը պատողն, այլ և յուլարկաւորութեան յիշատակն որ մեծապէս

քաղցր է մեռնողին համար, և որուն գերագոյն մխիթարութիւնը նաւակածեալ մը չունէր: Լացող չունենալն ու չթաղուիլ, մեռեալ հողոյ համար միշտ տարաբաղդ և թշուառ ըլլալ կը նշանակէր: Սակայն Վիրգիլիոսի մէջ՝ ենէասայ հառաչանաց վերջին մասն զարմանալի կորով և գեղեցկութիւն ունի .

« Ուր քաջն Հէկատր նետահար յեակիգեայ, և
մեծն անկաւ
Սարպէգոն, ուր Սիմոյիս ընդ կոհակզըն թաւալէ
Յօփոշտակեալ զարի արանց ասպար ըզգէն և
սաղաւարտ
Եւ զգիակունըս կորովս »

Առաւելութիւն մը չէ այս քան զՀոմերոս, վերադիր գեղեցիկ մտածութիւն մը, պսակաւորելով զայն, որով հռովմայեցի բանաստեղծն կ'ուզէ ազատ ընել իր հետեւողութեան մնացորդը, և իւր կնիքը գրողմել: Այլ պէտք է ուշագրի ըլլալ. դարձեալ Հոմերոսէն առած է այս մասն ալ. բայց ուրիշ հատուածի մէջէն և բոլորովին տարբեր դէպքէ մը, և շատ պատշաճ կերպով միացուցած է և յարմարցուցած: Վիրգիլիոս այս կերպ շարայարութեան մէջ գերազանց է, այսինքն զանազան կտորներ ձարտալու յոռեաւմը յարմարցընելով, գեղեցիկ հատուածներ մէկ մարմին կազմելով, և մէկ ոճոյ վերածելով: Իլիականի ժիւրգին սկիզբէն է, ուր կը խօսուի այն պարսպին վրայ՝ զոր Յոյքը կառուցեր էին իրենց նաւերուն չորս կողմը: Այս պարիսպս շինուած էր առանց հարիւրեզանց և պահանջուած արարողութեանց, և զոր Աստուածք՝ յետ մեկնելոյն Յունաց, կործանեցին: Ապոլոն և Պոսիդոն զլիսաւորապէս միտքերնին դրին աւրելու. և որպէս զի ամենեւին հետքն անհետ ըննն, իդայէն բոլրամբողջ գետերու բերանն՝ ինն օր, դարձուցին խուռն բազմութեամբ պարըսպին վրայ .

« Հւետոս, և Հեպտատոր և Կարետոս և Հուգիոս,

Գրենիկոս և Էսպոս և Սկամանդրոս աստուածային,
Եւ Սիմյէն, ուր խուռն ասպարք արջառա-
մորթք՝ և սաղաւարոք
Անկան տըղմթաւալ, և ազգ արանցըն կիսա-
դից »,...

Ահա Վիրգիլիոսի բովանդակ տողերն ,
որ իր մտքին մէջ պատրաստ կեցեր
էին մինչև որ ճարտարութեամբ ազոյց
ենէասայ հառաչանքին վերջը , զոր կը
նկարագրէ : Կը հասկընանք , տեսնե-
լով այս հնարագիւտ յաջողակութիւ-
նը , Վիրգիլիոսի պատասխանն առ զին .

Քը մեղադրողներն , թէ Հոմերոսէն կը
գողնայ . ահա այսպէս կ'ըսէ . « Ինչու
իրենք ալ չեն ջանար զնոյնն ընել . որ-
պէս զի տեսնեն թէ աւելի դիւրին է
Հերակլեսէն իր լախտը գողնալն , քան
թէ Հոմերոսի մէկ տողն » : — Եւ յիշա-
ւի այս կերպ գողնալն , ուրիշ տեղոյ
տողերն առնուլ , յարմարցընել և դնել
պահանջուած տեղն , իր գեղեցկու-
թիւնն յայտնի ընող տեղն , կ'իմացը-
նէ թէ գրողն գեղեցիկ նախագիծ օրի-
նակն և պատկերին գաղափարը պայ-
ծառապէս մտքին մէջն ունի :

Կը շարունակուի :

Տ Ր Դ Ա Տ Ք Ե Ր Թ Ո Ւ Ա Ծ Թ Ա Տ Ր Ե Ր Գ Ա Կ Ա Ն

Յ Ե Ր Ի Ս Ա Ր Ա Ր Ո Ւ Ա Ս Ս ' ,

Ա Ր Ա Ր Ո Ւ Ա Ծ Բ .

Տեսարանն է յԱմարաստանն առ Մայրաքաղաքս Վաղարշապատս . ի սրահին Արքունի
(Նկարք դիպագանց յորմանս , և կամարք յաղբանակաց) :

Տ Ե Ս Ս Ր Ա Ն Ա .

Ս մթառ

Ոչ բարձր ի գլուխ պարծին յերկրի աւագք և տեարք ընդերկայն
Եւ ոչ զլւարթ գիպին աւուրք տալ ըզհանգիստ յամառան ,
Թէ ոչ պարք դից խընամ ածեալ անդարձ տացեն պատուիրան
Մի այլ տեղալ ջուրց կոհակաց՝ ըզշանթ կալեալ որոտման :
Լոյսն արեգի ոչ փոյթ զեղու զաւետիս իւր բերկրանաց
Թէ ոչ անհետ փարատիցի սեաւ մըթուլծիւն գիշերաց .
Կարգք են սոքա ուղղեալք բազկաւ անմահ վեհից մըշտակաց
Որովք երկինք , հաստատութիւնք , և հոյլք լուսոյ են քանդուած .
Այժ , վրտանգք և արհաւիրք ընթացան մեր առաջի
Եւ երկուստեք՝ արեան հեղան գետք յորդահոս ի դաշտի .
Յաղթեաց բազուկ քաջ կորովոյս մաշեալ ի սուր սուսերի ,
Անկանգնելի անկաւ վիրազն Հիւսիսայնոյ վատորդի :
Պանծայ զարդիս տուն Հայկազնեան ընդ յաղթութիւնն ներկայ ,
Զերկիւղ մերժեալ և ըզկորուստ՝ զի հէզք անկան անխընայ :
Օր է փառաց , օր ցընծութեան , նոխազ զենցի Անահտայ ,